ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Ա. Ղազոյան

«31» օգոստոսի 2023թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

Լոռու մարզի Վանաձոր քաղաքի

Վ. Համբարձումյանի անվան թիվ 25 հիմնական դպրոց, 3-րդ Գ դասարան

Համբարձումյան Հեղինե Վաղինակի

« 2023- 2024 » ուսումնական տարի

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուսումնակա ն շաբաթները	**Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը**	Կատարման ժամկետը	Կատարողներ
I	Աշակերտներին ընդունել, ապահովել համապատասխան դասագրքերով, ներկայացնել անհրաժեշտ պարագաների ցանկը, հիշեցնել դպրոցական կարգ ու կանոնի մասին:Հատուկ ուշադրություն դարձնել սանիտարահիգիենիկ կանոնների պահպանմանը	սեպտեմբեր	Դասվար, աշակ.
II	Ընտրել դասարանի ավագ, սանիտարներ, օգնականներ Սահմանել հերթապահության կարգ	Սեպտեմբեր	Դասվար
III	Ստեղծել դասարանի կազմակերպական անկյուն	Սեպտեմբեր	Դասվար, ծնողներ
IV	<<Դպրոցը՝ ուսման դարբնոց>> թեմայով զրույց	Տարվա ընթացքում	Դասվար
V	Դասավանդող ուսուցիչներին իրազեկել դասարանի բարոյահոգեբանական վիճակի մասին	պարբերաբար	Դասվար
VI	Փակցնել երեխաների ձեռքի աշխատանքները	Տարվա ընթացքում	Դասվար
VII	Հայաստանի Հանրապետության խորհրդանիշները, Հայաստանի Հանրապետության անկախության տոնը	սեպտեմբեր	Դասվար
VIII	Փողոցներում և ճանապարհներին սովորողների վարքի հիմնական կանոնները Մանկական ճանապարհատրանսպորտային վնասվածքներ	հոկտեմբեր	Դասվար
IX	Իմ բնօրրանը	հոկտեմբեր	Դասվար
X	ՈՒսուցչի տոն	հոկտեմբեր	Դասվար
XI	Ինչ է ընկերությունը, բարեկամությունը	նոյեմբեր	Դասվար
XII	Իմ իրավունքներն ու պարտականությունները	պարբերաբար	Դասվար
XIII	Երեխաների միջանձնային հարաբերությունների ձևավորման նպատակով զրույցներ ընկերության և ազնվության վերաբերյալ		Դասվար
XIV	Աշակերտների տետրերի և դասագրքերի վիճակի ստուգում: Ծնողների հետ քննարկում, առաջադրված հարցերի լուծում		Դասվար
XV	Աշնանային արձակուրդների ընթացքում այցելություն Ստեփան Զորյանի տուն-թանգարան		Դասվար
XVI	Այցելություն մանկական գրադարան		Դասվար

XVII	Աշխատանքը հաջողության առաջին պայմանն է		Դասվար
XVIII	Կատարել դասալսումներ		Դասվար
XIX	Ուսուցիչների և ծնողների հետ կազմակերպել հանդիպումներ /ըստ անհրաժեշտության/		Դասվար
XX	Համագործակցել դպրոցի հոգեբանի,սոցմանկավարժի հետ		Դասվար
XXI	Ստեղծել հեքիաթի անկյուն		Դասվար
XXII	Աշակերտների տարրական գործունեությունը, կենցաղային իրադրություններում ինքնօգնության և փոխօգնության տարրերը		Դասվար
XXIII	Սովորողների մեջ դաստիարակել հասարակական վայրում բարեկիրթ վարվելակերպ		Դասվար
XXIV	Ձևավորել բնական և տեխնածին աղետների ժամանակով անվտանգության կանոններից օգտվելու կարողություն		Դասվար
XXV	Անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանում		Դասվար
XXVI	Դասագրքերի վիճակի ստուգում, համագործակցելով գրադարանավարի հետ		Դասվար
XXVII	Հետևել սովորողների կեցվածքին		Դասվար
XXVIII	Հետևել էթիկայի կանոններին		Դասվար
XXIX	Քննարկել բնապահպանական խնդիրներ, պահպանել շրջակա միջավայրը, դպրոցի տարածքը • Մասնակցել համադպրոցական շաբաթօրյակին և ծառատունկին՝ սերմանել սեր դեպի բնությունը		Դասվար
XXX	Առաջնորդներ, ովքեր պատմություն են կերտել՞ Ծանոթանալ այն մեծագույն առաջնորդների հետ, ովքեր տարբեր ժամանակներում անջնջելի հետք են թողել մարդկության պատմության մեջ		Դասվար
XXXI	Հայրենասիրական դաստիարակություն ձևավորելու նպատակով այցելել պատմամշակութային օջախներ	ընթացքում	դասվար
XXXII	Շարունակելու ենք կերտել հաղթանակներ	Տարեվերջ	դասվար
XXXIII	Վ.Անանյանի պատմվածքի ընթերցում և քննարկում		
XXXIV	Ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի քննարկմանը ներկայացնել սովորողին խրախուսանքի (բարձր դասարաններում կարգապահական տույժի) ներկայացնելու հարցը • 2022-2023 ուսումնական տարվա արդյունքների ամփոփում՞ Քննարկումներ բացթողումների և ձեռքբերումների շուրջ		դասվար

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

2.ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ա/ Ուսումնական տարվա ընթացքում իրականացնել անձի համակողմանի եւ ներդաշնակ դաստիարակությունը_

բ/ դասարանում հաստատել բարձր առաջադիմություն և կարգապահություն,

գ/ ուսումնական աշխատանքում փոխօգնության կազմակերպում,

դ/աշակերտական կոլեկտիվի համախմբում,

ե/ կազմակերպչական հմտությունների զարգացում

զ/ Կիրառել արդյունավետ եւ ժամանակակից մեթոդներ՝ դասի նպատակին հասնելու համար :

է/ Կանխել անհարկի ուշացումներն ու բացակայությունները

ը/ Դաստիարակչական աշխատանք կատարել դասարանի սովորողների շրջանում, հայտնաբերել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողին ու նրա ընտանիքին:

թ/ Մասնակցել սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դիտարկմանը, բացահայտմանը, գնահատմանը և ման-կավարժահոգեբանական աջակցության համապատասխան ծառայությունների մշակմանը, դրանց ապահովմանը.

ժ/ Նպաստել սովորողների նկատմամբ դպրոցի և ընտանիքի միասնական մանկավարժական պահանջների կատարման ապահովմանը: կազմակերպել սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային ի/էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ.

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն

Արժեքային համակարգի ձեւավորման եւ մշակութային ժառանգության փոխանցման համար շատ կարեւոր է հոգեւոր դաստիարակությունը:Դասղեկի ժամերին անցկացնել զրույց-զեկուցուներ քրիստոնեական պատմությունից:Ծանոթացնել եկեղեցական տոներին:Աշակերտին քրիստոնյա մեծացնելու,հոգեւոր ժառանգությունը փոխանցելու համար առաջին հերթին պետք է հաշվի առնել նրա մտածողության, բերեւակայության, բարոյական առանձնահատկությունները

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Գեղագիտական դաստիարակություն կարեւորագույն խնդիրն է երեխային սովորեցնել շրջակա աշխարհի մեջ տեսնել հոգեւոր հարստություն,բարություն եւ գեղեցիկի մեջ դրսեւորվելու,գեղեցիկը արարելու կարողության ձեւավորում:Հաճախակի կազմակերպել էքսկուրսիաներ եւ այցեր մշակութային օջախներ:Ստեղծել դասարանական գրադարան,բույսերի անկյուն,ձեռքի աշխատանքների փոքրիկ ցուցահանդես:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Պարբերաբար զրույց անցկացնել հայրենասիրության,հայ հերոսների ու նրանց գործի մասին : Նշել Անկախության օրը,Հայոց բանակի օրը:Ուսումնական նյութին զուգակցել հայրենասիրական երգերի ուսուցումը:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել աշակերտների ճիշտ կեցվածքն ու նստելաձեւը,անցկացնել միջդասարանային սպորտային միջոցառումներ,սպորտլանդիաներ,դասի ընթացքում կազմակերպել ֆիզկուլտդադարներ:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Մասնակցել դպրոցում կազմակերպվող շաբաթօրյակներին,դպրոցի բակի կանաչապատման աշխատանքներին:Հետեւել կարգուկանոնին, դասարանի մաքրությանը:Զարգացնել աշակերտների մանր մոտորիկան ,բնական եւ արհեստական նյութերով պատրաստել հավաքածուներ:Սովորեցնել աշխատանքային գործիքներով անվտանգ ու հեշտ աշխատել:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Մասնակցել դպրոցում կազմակերպվող գարնանային ծառատունկին ,կազմակերպել սենյակային բույսերի խնամքը:Պարբերաբար զրույց անցկացնել բնության նկատմամբ հոգատար վերաբերմունք ցուցաբերելու մասին,պատմել բուսական ու կենդանական աշխարհին սպառնացող վտանգների մասին:

4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Ծնողներին մասնակից դարձնել դպրոցական կյանքին,յուրաքանչյուր ուրբաթ հայտարարել ծնողների հետ հանդիպման օր/ թեկուզ օնլայն հարթակների միջոցով/ :Ծնողխորհրդի հետ կազմակերպել տնայցեր հետ մնացող եւ հաճախակի բացակայող աշակերտների տուն:Հայտնաբերել եւ օգնել սոցիալապես անապահով ընտանիքի երեխներին:Ամրապնդել դպրոց-ընտանիք կապը:

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Անցկացման օրը, ամիսը, տարեթիվը	Անցկացվող միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը	Ծանոթություն
1.09.2023	Առաջին օրը դպրոցում: :Անցկացնել զրույց՝ <Ինչպես անց կացրեցի ամառը >	
8.09.2023	Ընթացիկ կազմակերպչական հարցեր:	
15.09.2023	Մենք Վ. Համբարձումյանի արժանի հետնորդներն ենք	
22.09.2023	Անվտանգ երթևեկություն	
6.10.2023	Զրույց՝ «Իմ տունն ու ընտանիքը» թեմայով:	
13.10.2023	Առողջ ապրելակերպ. հանդիպում բուժքրոջ հետ	
20.10.2023	Ոսկեհեր աշուն	
3.11.2023	Կոնֆլիկտների հաղթահարում՝ «Ընդհարում»,«Հրաժեշտ վիրավորանքին»,«Արի հաշտվենք»	
10.11.2023	Հեքիաթի ընթերցում	
17.11.2023	Զրույց՝ «Ի՞նչ է ընկերությունն ու բարեկամությունը» թեմայով	
24.11.2023	Հետիոտների տեղաշարժը ճանապարհներով և փողոցներով	
8.12.2023	Ինչպես պաշտպանվել բնական աղետներից	
15.12.2023	Փողոցների և ճանապարհների տարրերը	
22.12.2023	Դասարանում ձմեռային անկյան ձևավորում	
12.01.2024	Ամանորյա հրաշք	
19.01.2024	Փողոցների և ճանապարհների տարրերը :Ճանապարհների գծանշումը	
26.01.2024	Հայկական բանակ	
2.02.2024	Աշակերտների հիգենիկ վիճակի ստուգում	

9.02.2024	Լուսացույցի և կանգավորողի ազդանշանները Փողոցներն ու ճանապարհներն անցնելու կանոնները	
16.02.2024	Հովհ. Թումանյանի հեքիաթների մոտիվներով ստեղծված մուլտֆիլմերի դիտում և քննարկում	
23.02.2024	Շուտով գարուն է	
1.03.2024	Հեքիաթաթերապիա	
15.03.2024	Խաչմերուկներն ու դրանց տեսակները Ճանապարհային նշաններ	
22.03.2024	Իմ իրավունքները և պարտականությունները «Մեր քաղաքակիրթ դասարանը» «Ես իրավունք ունեմ»	
5.04.2023	ՈՒղևորների պարտականությոնները Տրանսպորտային միջոցներից իջնելիս փողոցն անցնելու կանոնները	
12.04.2024	Շրջակա միջավայր	
19.05.2024	Հանդուրժողականություն	
3.05.2024	Զրույց՝ «Ի՞նչն է ինձ ուրախացնում» թեմայով:	
10.05.2024	Մենք բոլորս տարբեր ենք	
17.05.2024	Վ.Անանյանի պատմվածքի ընթերցում և քննարկում	
24.05.2024	Զրույց՝ «Ինչպե՞ս եմ ուզում անցկացնել իմ ամառային արձակուրդները» թեմայով:	